Р. Л. АЗИЗБЕКЯН, *Рост культурно-технического уровня рабочего класса Советской Армении в условиях развитого социализма,* Изд-во АН Армянской ССР, Ереван, 1984, 164 с.

Ռ. Լ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ, Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի աճը զարգացած սոցիալիզմի պայմաններում, *ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1984, 164 էջ։*

Բանվոր դասակարգի՝ զարգացած սոցիալիզմի հասարակության սոցիալական կառուցվածքում գերակշռող հանրության պատմական փորձի, անցած ուղու և զարգացման հեռանկարների ուսումնասիրությունը սովետական պատմագիտության առաջնահերթ խնդիրներից է։ Այդ խնդիրների շարքում ուրույն տեղ ունի զարգացած սոցիալիզմի պայմաններում բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի աճի հետազոտությունը։ Բանն այն է, որ արտադրության գրեթե բոլոր ոլորտներում նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի, մասնավորապես էլեկտրոնային հաշվիչ մեքենաների զանգվածային կիրառումը մեծապես խթանում է այդ մակարդակի բարձրացումը, առաջ բերելով նույնիսկ արմատական որակական փոփոխություններ։ Նման եզրակացության ես գալիս, կարդալով Ռ. Ազիզբեկյանի մենագրությունը, որը նվիրված է արդի պայմաններում Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի աճի հետազոտմանը։ Հոնամուխ լինելով շատ ուրդիական, բայց ժամանակի առումով տակավին «նստվածք չտված» և դրանով իսկ համեմատաբար դժվար թեմայի հետազոտմանը, աշխատության հեղինակն իր առջև կոնկրետ խնդիր է դրել՝ բացահայտել Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի աճի համար որոշիչ օրինաչափությունները և հետագա զարգացման միտումները։ Սակայն պետք է նկատել, որ Ռ. Ազիզբեկյանի հետազոտությունն ունի ավելի լայն ընդգրկում, քան սոսկ զարգացած սոցիալիզմի շրջանում հանրապետության բանվորության կուլտուր-տեխնիկական մակարդակի հետազոտումն է։ Հեղինակն իր ընտրած պրոբլեմը դիտարկում է ընդհանրապես ՍՍՀՄ բանվոր դասակարդի զարգացման օրինաչափությունների հետ սերտորեն կապված։ Սա շատ կարևոր հանգամանք է, որովհետև բուն «տեղական շրջանակներից» դուրս գալը նրան հնարավորություն է տվել հաճախ անմիջականորեն, երբեմն էլ հարևանցի շոշափել հարցեր, որոնք կարևոր տեսական նշանակություն ունեն և ավելի են արժեքավորում աշխատությունը։

Կոմունիստական շինարարության շրջանում երկրի բանվոր դասակարգի գիտատեխնիկական և կուլտուրական մակարդակի աճի հարցերն ընդգրկող կուսակցական փաստաթղթերից և հատկապես ՍՄԿԿ XXI—XXVI համագումարների պատմական որոշումներից ելնելով՝ Ռ. Ազիզբեկյանը նշում է, որ 1950-ական թվականների երկրորդ կեսերից սկսած քննվող պրոբլեմի նկատմամբ գիտական հետաքրքրության աճը պայմանավորված է գիտատեխնիկական հեղափոխության լայն ծավալմամբ, որի հետևանքով երկրի զարգացմանը զուգընթաց ավելի ու ավելի է բարձրանում հեղափոխական պրոլետարիատի լավագույն հատկանիշների ժառանգորդ ժամանակակից բանվորության դերը։ Լինելով հասարակության առավել կազմակերպված, համախմբված և գիտակից դասակարգը, նա հաջողությամբ է լուծում հասարակական առաջընթացի բոլոր հիմնական հարցերը։ Սովետական բանվոր դասակարդն այդ անփոխարինելի դերը կատարում է իր շուրջը համախմբելով գյուղացիությանը և մտավորականությանը, որոնք ևս, բանվորության նման, բոլոր ուժերն ի սպաս են դրել երկրի կոմունիստական վերափոխության գործին։

Ռ. Ազիզբեկյանը գիտական քննության է ենթարկում այն տեսակետները, որոնք առկա են բանվոր դասակարգի «կուլտուր-տեխնիկական մակարդակ» հասկացության վերաբերյալ։ Բանն այն է, որ տվյալ հարցում միասնական մեկնակետ չկա։ Հեղինակը միանգամայն ճիշտ ստեղծ-

ված վիճակը բացատրում է մի կողմից խնդրի դժվարությամբ, իսկ մյուս կողմից՝ նրանով, որ միայն վերջին տարիներս է սկսվել սովետական հասարակության զարգացման բոլոր փուլերում խնդրո առարկա պրոբլեմի հիմնավոր հետազոտությունը։ Մերժելով թիչ թե շատ թերի մի շարք տեսակետներ, Ռ. Ազիզբեկյանը համամիտվում է այն հետազոտողների հետ, որոնք «բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակ» հասկացության մեջ ընդգրկում են բանվորների ընդհանուր և մասնագիտական կրթության, հոգևոր պահանջմունքների բավարարման ու պրոֆեսիոնալ պատրաստության հարցերը, ապա և՝ հասարակական գիտակցականության աստիճանը։ Բավական է թեկուզ հպանցիկ հայացք ձգել այս թվարկման վրա, որպեսզի պարզ լինի, թե արդի քաղաքակրթության ճանապարհին ինչպիսի հզոր թռիչք է կատարել սովետական բանվորությունը, թե ինչպիսի բարձր մակարդակի է նա հասել զարգացած սոցիալիզմի շրջանում։

Իր իսկ ընդունած չափանիշների առումներով հեղինակը հանգամանորեն հետազոտել է Սովետական Հայաստանի բանվորության հետ կապված այնպիսի հարցեր, ինչպիսիք են հանրապետության բանվոր դասակարգի քանակական և որակական կազմերի փոփոխությունները, ընդհանուր և մասնագիտական մակարդակի բարձրացումը, նյութական բարեկեցության և կուլտուրական պահանջմունքների աճը, բանվորական կադրերի պատրաստումը և վերապատրաստումը, տեխնիկական ստեղծագործությունը, հղբայրական համագործակցությունը ՍՍՀՄ մյուս հանրապետությունների բանվոր դասակարգի հետ և այլն։

Մենագրության մեջ առանձնահատուկ տեղ է հատկացված ՀՍՍՀ բանվոր դասակարգի կրթական մակարդակի աճին։ Ցույց է տրված, որ զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում մեր հանրապետության բանվոր դասակարգն իր կրթական մակարդակով միութենական հանրապետությունների մեջ գրավում է առաջին տեղերից մեկը։ Բանվոր դասակարգի ճյուղային ջոկատների կրթական մակարդակների համակողմանի համեմատությունը հեղինակին հնարավորություն է ընձեռել եզրակացնելու, որ բանվորության կրթական մակարդակը հատկապես բարձր է արդյունաբերության այն ճյուղերում, որոնք պայմանավորում են արդի գիտատեխնիկական առաջընթացը։ Աշխատության մեջ քննվում է նաև բանվոր-մտավորականների խավի հարցը և ցույց տրվում բանվոր դասակարգի կազմում նրա արագ աճը։ Ընթերցողի աչքի առջևով անցնում է ժամանակակից բանվորների դիմանկարների մի ամբողջ պատկերաշար, որոնց անունները լայնորեն հայտնի են հանրապետությունում։ Նրանք ոչ միայն արտադրության առաջավորներ են, նորարարներ, այլև համակողմանի զարգացած և հոգևոր մեծ պահանջմունքներ ունեցող մարդիկ։ Հեղինակը բերում է նաև առաջավոր բանվոր-նորարարների ու գիտնականների ստեղծագործական սերտ համագործակցության մի շարք օրինակներ, որոնք վկայում են հանրապետության բանվոր դասակարգի տեխնիկական մակարդակի բարձրացման մասին։ Այդ բոլոր հարցերը Ռ. Ազիզբեկյանը հետազոտել է բանիմացությամբ, ցուցաբերելով պատմական փաստերն ու երևույթները համադրելու հիման վրա գիտական եզրահանգումներ կատարելու կարողություն։ Ի վերջո նա եզրակացրել է, որ զարգացած սոցիալիզմի շրջանում «Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի աճի ընթացքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում հանրապետության բանվոր դասակարգն աճել է ոչ միայն քանակապես, այլև որակապես՝ բարձրացնելով իր պրոֆեսիոնալ վարպետությունը և ընդհանուր կուլտուրական մակարդակը։ Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգի առաջատար դերը դրսևորվում է կյանքի բոլոր բնագավառներում՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր։ Հայաստանի այսօրվա բանվոր դասակարգն ունի ստեղծագործական մեծ պոտենցիալ, նա ունակ է հաջողությամբ լուծել կոսակցության կողմից առաջադրված՝ կոմունիստական շինարարության խնդիրները, ղեկավարել և ուղղություն տալ հայ սոցիալիստական ազգի հասարակական առաջընթացին» (էջ 147)։

Ռ. Ազիզբեկյանի ուսումնասիրությունը հենված է աղբյուրագիտական հարուստ հիմքի վրա. հեղինակն օգտագործել է ինչպես քննվող հարցերի շուրջ լույս տեսած աշխատությունները, այնպես էլ բազմաթիվ վիճակագրական, արխիվային և սոցիոլոգիական հետազոտությունների նյութեր, որոնք շատ դեպքերում գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ։

Արժանին մատուցելով Ռ. Ազիզբեկյանին, միաժամանակ հարկ է նշել, որ գրախոսվող աշխատությունը զերծ չէ թերություններից։ Դրանք մասնավորապես հետևանք են այն բանի, որ մեր իրականության մեջ հեղինակն առաջինն է ձեռնարկել տվյալ թեմայի ուսումնասիրությունը։ Առանձին դեպքերում փաստական նյութերը (մասնավորապես վիճակագրական տվյալները) ներկայանում են հարցի տեսական կողմի հանգամանալից մեկնաբանությանը։ Ինչ խոսք, առանց

վիճակագրական տվյալների հնարավոր չէ հետազոտել սոցիալ-տնտեսական կյանքի այս կամ այն բնագավառում կատարվող տեղաշարժերը, սակայն ոչ բոլոր դեպքերում է վիճակագրությունը լիովին արտացոլում իրերի իրական վիճակը։ Այնուհետև, հեղինակը նշում է, որ «բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման նյութական հիմքը գիտատեխնիկական հեղափոխությունն է ու սոցիալական պլանավորումը, որոնք որոշվում են զարգացած սոցիալիստական հասարակության պահանջմունքներով» (էջ 147)։ Հազիվ թե ճիշտ է պլանավորմանը նման ֆունկցիա վերագրելը։ Այս թերությունները, սակայն, չեն նսեմացնում գրախոսվող աշխատության արժանիքները։ Այն զգալի ներդրում է Սովետական Հայաստանի զարգացած սոցիալիզմի շրջանի բանվոր դասակարգի պատմության հետազոտման շնորհակալ գործում։

ԱՐԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր